

որպէս զի անոնք այլ նուիրագործուն չեն նշմարտութեամբ» ..Յով. ԺԷ. 19:

Ապրումներ եւ գաղափարներ կը հարստանան երբ հեղինակը կամ բանաստեղծը կ'ապրի ցաւին, երանութեան եւ ոգեւորութեան հարազատութիւնը: Ո՛վ Քրիստոս, ցոլացուր Ինքզինքդ մեր ապրումին մէջ: Մարդկային յայտնագործութիւններու կատարը Յիսուսի նանաչումն է որպէս Ազատարար եւ ներում շնորհող Տէր:

Յիսուս Իր աղօթքը կը վերջացնէ պաղատելով Հօր Աստուծոյ ու կ'ըսէ. «Քեզ նանաչուցի անոնց եւ պիտի շարունակեմ նանաչել, որպէս զի անոնց մէջ ըլլայ այն սէրը որով զիս սիրեցիր եւ ես ըլլամ անոնց մէջ» ..Յով. ԺԷ. 26: Ուստի, մեր Տէրը՝ Յիսուս, Իր նանաչման յայտնութիւնը կը շարունակէ նոյնիսկ Իր համբարձումէն յետոյ՝ ցարդ: Ի՛նչ երանելի են բոլոր անոնք, որոնք ունին շնորհը նանաչելու Քրիստոսը անձնապէս,

ոչ միայն չորս Աւետարաններէն, այլ նաեւ հոգեկա՛ն տեսանելիութեամբ: Հաւատացեալներ, այսպիսի՛ նանաչումի կանչում չեն ցոլացնելու համար իրենց Տէրն ու Փրկիչ Յիսուսը: Ուստի ո՛վ աստուածայայտնիչ Վարդապետ ու անբովանդակելի Բարութիւն՝ Քրիստոս, ցոլացո՛ւր Ինքզինքդ մեր ապրումին մէջէն:

Քալե՛նք ուրեմն միասնաբար ով հաւատքի եղբայրներ, Խաչի նանապարհէն, Խաչեցեալի՛ հետեւելով ու Յարութեան տեսիլով: Յարուցեալ Յիսուս մեզ յաւիտենական կեանքի կապող կամուրջն է, մեզ ապագային տանող լուսեղէն նանապարհն է, Յիսուսի իւրաքանչիւր խօսքը եւ բժշկութիւնը Յարութեան լոյսին առաջնորդող նանապարհն է:

Ամէն:

Ա. Ա. ՊԷՒ ԵՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

## ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Ս. Զատկուան առիթով, շնորհաւորանքի զիրեր եւ հեռագրեր առաճուեցան Հոգեւոր ու Կառավարական պետերուն եւ Առաջնորդներուն, որոնց շնորհաւորագիրերը ստացած է Պատրիարք Սրբազան Հայրը.-

- Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին.
- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսին.
- Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ Քահանայապետին՝ Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապին.
- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ Ամեն. Տ. Ալէէսէյ Բ. Սրբազան Պատրիարքին.
- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Մեսրոպ Բ. Մութաֆեան Սրբազան Պատրիարքին.
- Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահ Տէր. Միխայէլ Եսայեանին.
- Թեմակալ Առաջնորդներուն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներուն.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



SUPREME PATRIARCH  
CATHOLICOS  
OF ALL ARMENIANS  
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ՄԱՅՐ ԱԹՈՌ-ՍՈՒՐԷ ԷՋՄԻԱԾԻՆ

Թիվ 467

Սուրբ Չատիկ 2004թ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ  
Տ. ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆՈՒԿՅԱՆ  
ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ  
Երուսաղեմ, Իսրայել

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք,  
Սուրբ Չատիկ և մեր Տիրոջ հրաշագարչ Հայության բարի ավետիսով Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Քրիստոսավանդ սիրո ողջույնը և սրտաբուխ Մեր շնորհավորանքները Ձեզ, Տիրախնամ Աթոռիդ ուխտապահ միաբանությանը, եկեղեցական-վարչական մարմինների պատվարժան անդամներին և հավատավոր բոլոր հայորդիներին:

Տիրոջ Հարության կենարար խորհրդով կրկին անգամ բացվել են երկնքի ողորմության դռները և մեր հոգու ու մտքի հայացքները վերստին ուղղված են դեպի մեր ապավենն ու փրկության հույսը, Հարուցյալ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Ով «մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իլրով մեզ զկեանս պարգևեաց»: Այսօր վերստին նորոգում ենք մեր հավատքը և գոտեպնդվում՝ նորոգ վստահությամբ հաղթահարելու ազգային-եկեղեցական մեր կյանքը հուզող մարտահրավերներն ու դժվարությունները:

Հավատում ենք, որ Փրկչի ամենակեցույց Հարությունը հայրենաբնակ ու աշխարհասփյուռ մեր զավակների սրտերում առավել պիտի գորացնի սերն ու նվիրումը, հույսն ու լավատեսությունը՝ միասնական ուժերով շենացնելու մեր հայրենիքը և ծաղկեցնելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Մեր հայցն ու մաղթանքն է, որ Փրկչի Հարության կենսապագև շնորհները առատապես բաշխվեն ազգերին ու ժողովուրդներին, որպեսզի համայն աշխարհում բազավորեն խաղաղությունը, ապահովությունն ու եղբայրասիրությունը:

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք, «Քրիստոս յարեալ ի մեռելոց» երկնածայն օրհներգությունը Մեր շուրթերին՝ համայն հայոց Միածնաեջ Սուրբ Տաճարում աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ հայցելով Հարուցյալ Փրկչի հանապազ օրհներգությունն ու հովանին բարեպաշտ մեր ժողովրդի զավակներին, հայրենի մեր երկրին և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն՝ Նվիրապետական իր Աթոռներով ու եկեղեցականաց դասով:

Թող Աստվածօրոյու հաղթական հարության շնորհը քաջառողջ կյանք և գահակալության երկար տարիներ պարգևի Ձեզ՝ ի պայծառություն Երուսաղեմի Հայոց Պատրիարքության և բարեպաշտ հավատացելոց:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԼ Ի ՄԵՌԵԼՈՅ,  
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Եղբայրական սիրո ողջունիվ,  
աղոթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Բ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



# ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿՐԼԻԿՈՅ

ԱՆԹՈՆԻԱՍ - ԼԵԲՆԱՆՆ

Խի 62/04

Անքիլաս, Ս. Ջատիկ, 2004

Ամենապատիւ  
Տ. Թորգոմ Արքեպսկ. Մանուկեան  
Հայ Պատրիարք Երուսաղէմի  
Երուսաղէմ.

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս,

Քրիստոսի հրաշափառ Յարութեան խորհուրդով յեցուն այս օրերուն, դարձեալ մեր ժողովուրդի գաւակները իրենց հոգիներուն նայուածքը կ'ուղղեն Քրիստոսի քափուր գերեզմանին ու կը լսեն ձայնը հրեշտակներուն՝ "Չէ աստ, այլ յարեալ" (ՄԱՏԹ. ԻԼ. 6): Այս պարզ սակայն խորիմաստ բաներուն մէջ է թագնուած իմաստը, խորհուրդը ու զօրութիւնը քրիստոնէական հաւատիին: Ինչպէս Առաքեալը կ'ըսէ՝ "Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են եւ հաւատն ձեր" (Ա. ԿՈՐՆԹ. ԺԾ. 14-15):

Մեր ժողովուրդը դարեր շարունակ ա'յս հաւատով ապրեցաւ, ստեղծագործեց ու պայքարեցաւ: Մեզ Քրիստոսն ու անոր յարութեամբ շաղախուած քրիստոնէական հաւատէն հեռացնող աշխարհի ներկայ պայմաններուն մէջ, մեր ժողովուրդը որքա՜ն պէտք ունի յարութեան հաւատիին՝ իր կեանքը անով շաղախելու ու հզօրացնելու: Մեր պատմութեան ներկայ հանգրուանին, երբ Հայաստանի թէ Սփիւռքի մէջ յաճախ ներքին զգայնութիւններ ու տարակարծութիւններ կը ջլատեն մեր հաւաքական կամքը, յոյսը ու տեսիլքը, մենք որքա՜ն հրամայական անհրաժեշտութիւնը ունինք կառչելու Քրիստոսի յարութեան վրայ խարսխուած մեր քրիստոնէական հաւատին ու անկէ բխող մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներուն: Ահա՛ պատգամը Քրիստոսի յարութեան՝ ուղղուած մեր ժողովուրդի բոլոր գաւակներուն: Այս յաւերժախօս պատգամին պատգամաբերը պէտք է դառնայ մեր եկեղեցին իր հոգեւոր սպասաւորներով, իր կեանքով ու առաքելութեամբ:

Այս մտածումներով ու յանձնառութեամբ կ'ողջունենք Քրիստոսի յարութեան տօնը: Կը մաղթենք որ Աստուած հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձերդ Ամենապատուութիւնը, ի սպասաւորութիւն մեր Ս. Եկեղեցւոյ ու պատուական ժողովուրդին:

Եղբայրական շերտ սիրով,

Աղօթակից՝  
*(Handwritten signature)*

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵՏԻ ՏԱՆՆ ԿՐԼԻԿՈՅ



SECRETARIAT OF STATE

No. 555.499

From the Vatican, 28 April 2004

Your Beatitude,

His Holiness Pope John Paul II has received with joy and gratitude your prayerful good wishes for Easter and he has asked me to thank you on his behalf. In these days all Christians rejoice in the Resurrection of the Lord, *"the good news that what God promised to our fathers, this he has fulfilled to us their children by raising Jesus"* (Acts 13:32).

Since the time of the Apostles, the joyful message of the Resurrection has not ceased to resound all over the world. Through the loving mercy of the Father and the power of the Holy Spirit, Jesus has conquered the darkness of hate, of suffering and of death. Through his cross he has freed us from sin, through his Resurrection he has opened for us the way to eternal life. In him, the Christian faithful *"have tasted . . . the powers of the age to come"* (Heb 6:5). Blessed be God who gives to the Church the joy of celebrating so great a mystery.

In this season, I joyfully add my own greetings to those of His Holiness and assure you of my fraternal good wishes.

Yours sincerely in Christ,

Secretary of State

His Beatitude Torkom Manoogian  
 Armenian Patriarch of Jerusalem  
 St. James Monastery  
 PO Box 14001  
 91141 Jerusalem



**Патриарх  
Московский  
и всея Руси**

119034 Москва, Чистый пер., 5

**ЕГО БЛАЖЕНСТВУ,  
БЛАЖЕННЕЙШЕМУ ТОРКОМУ II,  
АРМЯНСКОМУ ПАТРИАРХУ ИЕРУСАЛИМА**

**Ваше Блаженство!**

В этот светлый день, когда христиане всего мира радостно вспоминают Воскресение Господа и Спасителя нашего Иисуса Христа, приветствую Вас словами, в которых заключена самая сущность христианского благовестия:

**Христос Воскресе!**

Воскресение Христово – это торжество света над тьмой, жизни над смертью, свободы над порабощением. «Никто пусть не плачет о грехах, - говорит святитель Иоанн Златоуст, - ибо из гроба воссияло прощение. Никто пусть не боится смерти, ибо освободила нас смерть Спасителя». Возрадуемся же духовной радостью о Воскресшем Господе, дабы, по слову апостола, «как Христос воскрес из мертвых славою Отца, так и нам ходить в обновленной жизни (Рим. 6,4).

От всего сердца желаю Вам пасхальной радости, доброго здоровья и помощи божией во всех Ваших трудах и начинаниях.

С любовью о Христе Воскресшем

**ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ**

Пасха Христова  
2004 г.  
Москва